
ԱՐԵՎՍՈՒՏՔԻ «ԵՍ»-Ը ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԱՐԴԸ
ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԶԱՔԱՐՅԱՆ Մ. Գ.

Համամարդկային արժեքների գաղափարի քարոզչությամբ, հատկապես վերջին երկու դարերի ընթացքում գլոբալ կառավարում իրականացնելու նպատակով Արևմուտքը ստեղծել է համընդհանուր արժեքների համակարգ, որը մշակութային կյանքում (և առհասարակ նորագույն քաղաքակրթության մեջ) նշանակում է համահարթեցման քաղաքականություն: Արևմուտքի մարտահրավերներին Արևելքը միշտ էլ յուրովի է պատասխանել, և մի քանի հազարամյակի պատմություն ունեցող համաշխարհային քաղաքակրթության մեջ կատարվող այս համընդհանրացման երևույթը (մակեդոնական, հռոմեական..., խորհրդային) նորագույն ժամանակներում անվանվում է գլոբալիզացում՝ համաշխարհայնացում: Դարերի քառուղիներով անցած ժողովուրդները տեսակի հարատևման մտահոգությամբ վերազգայինը դարձնում են ազգային շարունակությունը ապահովող գորեղ գործոն: Այս առումով էլ Արևելք-Արևմուտք և՛ մենախոսության, և՛ երկխոսության ուսումնասիրությունը հրատապ է հատկապես այն փոքրաքանակ ժողովուրդների համար, որոնք գտնվում են այդ խաչմերուկներում. «Մենք մեջտեղն ենք – *հոգևոր* Արևելքի և *գործնական* Արևմուտքի... Երկուսի սինթեզը», - կյանքի վերջին տարիներին գրել է Հ. Թումանյանը¹: Արևելք - Արևմուտքի փոխհարաբերություններով է պայմանավորված նաև Հայաստանի, հայ ժողովրդի տեղն ու դերը գլոբալ քաղաքակրթության ժամանակի և տարածության մեջ: Անդրադարձալով ընդհանրապես միջմշակութային հաղորդակցմանը՝ ռուս գրականագետ Մ. Բախտինը գրում է. «Մենք օտար մշակույթի առջև նոր հարցեր ենք դնում, որ ինքն իր առջև չի դրել, և նրանում փնտրում ենք մեր հարցերի պատասխանը, իսկ օտար մշակույթը պատասխանում է մեզ՝ բացելով մեր առջև իր նոր կողմերը, նոր մտավոր խորքերը... Առանց մեր ստեղծագործական հարցերի՝ հնարավոր չէ ստեղծագործաբար հասկանալ օտարին... Երկու մշակույթների այսպիսի երկխոսությունների հանդիպման ժամանակ նրանք չեն միանում, չեն միախառնվում. յուրաքանչյուրը պահպանում է իր առանձնահատկությունները... սակայն նրանք փոխադարձաբար հարստացնում են միմյանց...»²:

Արևելք - Արևմուտք երկխոսությունների ուսումնասիրությունը նոր երևույթ չէ մեր ազգային, մշակութային կյանքում. նոր ժամանակներում այն ներկա է ոչ միայն Ավ. Իսահակյանի, այլև Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի ստեղծագործություններում: 1921 թ. Թումանյանը գրում էր.

Արյունալի աղետներով, աղմուկներով ահարկու,
Արևմուտքի ըստրուկները մեքենայի և ոսկու՝
Իրենց հոգու անապատից խուսափում են խուռներամ

¹ Թումանյան Հովհ., Երկերի ժողովածու, հ. VI, Ե., 1959, էջ 254:

² Бахтин М. М., Эстетика словесного творчества, М., 1979, с. 334-335.

Դեպ Արևելքն աստվածային – հայրենիքը իմ հոգու...³:

«Հովհ. Թումանյանը Եվրոպան և հասարակ Արևմուտքը չէր սիրում: Եվրոպացի իր արտաքինով, նիստ ու կացով, Հովհ. Թումանյանը, սակայն, արևելցի էր իր ողջ էությամբ... Գնահատում էր Արևմուտքի մշակույթը, բայց ատում էր եվրոպացիների անարտությունը և ընչաքաղցությունը: Սիրում էր Արևելքը և Արևելքի մշակութային արժեքները շատ բարձր էր գնահատում», - հավաստում է նրա կրտսեր ժամանակակից Վ. Ահարոնյանը ⁴:

Իսահակյանը ևս Թումանյանի նման Արևելքը իմաստության աղբյուր է դիտում, ինքն իրեն Արևմուտքի մարդ համարելով՝ Արևելքի գաղափարախոսություն դավանում: Վարպետի գրական վաստակում Արևելք-Արևմուտք երկխոսությունների հիմքում ոչ միայն Հայաստանի քաղաքական ճակատագրի շուրջ խոհեր-խորհրդածություններն են, այլև գրողը հետամուտ է հայ մարդու և հայկական մշակույթի արդիականացմանը, որպեսզի հայ մարդը պատրաստ լինի երկխոսության:

Դեռևս օրագրի՝ «Հիշատակարանի» վաղ տարիների գրառումների վկայությամբ՝ Իսահակյանին զբաղեցնում էին հայ տեսակի, հայոց ինքնության խնդիրները: Իր երկրի քաղաքական ճակատագրի հարցում Արևմուտքին հակադրվելով հանդերձ՝ օրագրի և ստեղծագործական վաստակի զուգահեռների հավաստմամբ՝ Վարպետն Արևմուտքի եսակենտրոն, սպառողական հոգեբանության տեր տեխնապաշտ մարդուն հակադրում է Արևելքի համայնակենտրոն, ավանդապաշտ, մարդասեր և արարչագործ էակին⁵: Ուշագրավ է, որ նշված հակադրությունն ուրույն և ծայրահեղ մոտեցումներով են ներկայացրել Արևմուտքի մտածողները. եթե Օ. Շպենգլերը «Եվրոպայի մայրամուտը» գրքում մայրամուտ ապրող Եվրոպայի փրկությունն առնչում էր «Արևելքի ցայտող ուժերին»⁶, ապա ամերիկացի քաղաքագետ Ս. Հանթինգտոնը քամահրաբար է արտահայտվում վերջինիս մասին՝ «Արևմուտքը և մնացյալ բոլորը»⁷:

Մշակութային հաղորդակցումը XX դ. հրատապ պահանջը չէ միայն: Այն ենթադրում է քաղաքակրթությունների երկխոսություն: Նշված ենթատեքստով էլ պետք է քննվեն, կարծում ենք, Ավ. Իսահակյանի՝ հնդկական թեմաներին նվիրված ստեղծագործությունները՝ նշելով նաև նրա ստեղծագործական հետաքրքրությունների «աշխարհագրությունը»՝ սկսած հունականից, գերմանականից, ֆրանսիականից, իսպանականից, իտալականից, ռուսականից և արաբականով, հրեականով, պարսկականով, չինականով, և սա դեռ ամբողջը չէ:

Վարպետը մեծ հետաքրքրություն է հանդես բերել հին Արևելքի բանահյուսության, գրականության, կրոնի ու փիլիսոփայության նկատմամբ: Այս

³ Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, Ե., 1978, էջ 73:

⁴ Ահարոնյան Վ., Հովհաննես Թումանյան, Մարդը և բանաստեղծը, Բոստոն, 1936, էջ 107-108:

⁵ Այս հարցին մանրամասն անդրադարձել է էդ. Ջրբաշյանը «Արևելք-Արևմուտք հակադրությամբ Հովհ. Թումանյանի ըմբռնմամբ» հոդվածում (Պատմա-բանասիրական հանդես, 1998, N 1-2): Թումանյանի օրինակով՝ Իսահակյանը ևս տարբերակում էր հին Արևելքի և Թուրքիայի բերած ավերածությունները:

⁶ Шпенглер О., *Закат Европы*, М., 1998, с. 256.

⁷ Хантингтон С., *Столкновение цивилизаций*, М., 2002, с. 510.

են հավաստում հին արևելյան դիցաբանության հիմքի վրա ստեղծած նրա բազմաթիվ լեգենդները, բալլադները, առակները, բանաստեղծությունները, արձակ գործերը, օրագրի, ծոցատետրերի բազմաթիվ գրառումները՝ քաղված հին Արևելքի մտածողների ասություններից, անձնական գրադարանի հարուստ գրականությունը: Նրա անձնական գրադարանում պահպանված են, օրինակ, բուդդայական ուսմունքի, դրա հիմնադրի մասին աշխատություններ՝ Նոյման, «Գոտամո Բուդդայի մտքերից» (Լայպցիգ), Մանավու Դհարմա-Մաստրա, «Մանու օրենքները» (Փարիզ), «Հնդկական կրոնական իմաստասիրական գիրք» (Փարիզ), Ռ. Ֆոն Դելիուս, «Բուդդա» (Լայպցիգ), Ֆ. Ֆոնայսն, «Նիրվանա» (Լայպցիգ):

Քանի որ բավականաչափ ուսումնասիրված են Իսահակյանի՝ արաբական մոտիվներով ստեղծագործությունները, մասնավորապես 1909 թ. գրած «Աբու-Լալա Մահարի» պոեմը, ուստի կարևորում ենք հնդկականը՝ չգերազնահատելով և չթերազնահատելով դրանցից և ոչ մեկը:

«Աբու-Լալա Մահարի» պոեմից մեկ տարի առաջ՝ 1908 թ., Իսահակյանը գրում է «Բուդդան» (1908) լեգենդը, որն ունի «Մեծ Տոլստոյի ութսունամյա հոբելյանին՝ խոնարհ նվեր» ընծայականը: Թվում է՝ այստեղ հայ գրողը նկատի է ունեցել հարուստ և բազմաշերտ մշակույթի հիմքի վրա դաստիարակված երկու գրողների հոգեհարազատությունը՝ ինքնագոհության, ազնվության, ճշմարտության, մարդասիրության, բարոյական իդեալ-մարդու հաստատման որոնումներով: Ուշագրավ է մի այլ հանգամանք ևս. այն այլազգի հեղինակին ուղղված եզակի ընծայական է: Հայտնի է, որ Լ. Տոլստոյը հետաքրքրվել է բուդդայական փիլիսոփայությամբ, և ռուս գրականագիտությունը մատնանշել է տոլստոյականության աղերսները բուդդիզմին⁸ և չին մտածողներին:

Ավ. Իսահակյանի օրագրի՝ «Հիշատակարանի» 1894 թ. գրառումներից մեկի վկայությամբ դեռ վաղուց նա ծանոթ էր համաշխարհային փիլիսոփայական մտքին, այդ թվում նաև՝ բուդդայականությանը. «Ի՞նչ է նիրվանան... ի՞նչ է կյանքը...»⁹: Համաշխարհային երեք կրոններից ամենահինը՝ բուդդայականությունը, քրիստոնեությունից հինգ դար առաջ է ստեղծվել, իսկ մահմեդականությունը առաջինից «փոքր» է տասներկու հարյուրամյակ: Այս կրոնը մարմնավորում է բարձրագույն իդեալներ՝ բարություն և առաքինություն, սեր մերձավորի հանդեպ և բարոյական կատարելություն: Փիլիսոփաների հայրենիքում՝ Հնդկաստանում, Բուդդան նոր փիլիսոփայական ուղղության ու բարոյախոսության սկզբնավորողն էր: Համաձայն ավանդության՝ ապրել է Ք. ա. 563-483 թթ.: Նրա մասին հյուսվել են բազմաթիվ դիցաբանական գրույցներ, որոնք

⁸ 1909 թ. օգոստոսի 25-ի օրագրային գրառումից տեղեկանում ենք. «Կարդում եմ Կոնֆուցիուս, Լաոցզի, Բուդդա... և տեսնում կողքիս խորքով ներհյուսված մի ուսմունք... մարդկանց ասությունները»: Այս նույն գրառման մեջ բուդդայական ուսմունքի 10 շղթաներից մեջբերումներ էլ կան: 1883 թ. փետրվարի 13-ի գրառման մեջ՝ «... ուղղում էի Բուդդային»: 1909 թ. օգոստոսի 26-ի գրառման մեջ Տոլստոյի դատողություններն են. «Ինչը Լաոյի մոտ ճանապարհ է, Հովհաննեսի մոտ սեր է: Լաոն խառնում է ճանապարհը ամեն ինչի սկզբի հետ (Տաո): Նույնն է անում նաև Հովհաննեսը և անվանում Աստծուն սեր» (*այս մասին տե՛ս նաև Թոլստոյ Լ. Ն., Юбилейное издание (1828-1928), т. 57, М., 1952, с. 120, 125*):

⁹ *Իսահակյան Ավ.* Հիշատակարան, Ե., 1977, էջ 102:

Էլ այլևայլ գրական ստեղծագործությունների հիմք են դարձել¹⁰: Բուդդայի մասին առաջին տեղեկությունները հայտնի են պալի լեզվով ձեռագրերում՝ «Մահապադանասուտտանտի» 14-րդ բարոյագիտական հորդոր-խրատում, որն էլ համարում են ինքնակենսագրական: Համաձայն վերջինիս՝ Բուդդա բառը ոչ թե անձնանուն է, այլ պատվանուն և նշանակում է «լուսավորված, պայծառության հասած»: Սուտխոդան Դաուտամա արքայազնը, 6 տարի մենության մեջ ապրելով, մտքով լուսավորվում է և մարդկանց փրկելու առաքելությամբ հայտնի դառնում «չորս ազնիվ ճշմարտության մասին» ուսմունքով: Մահվանից հետո նա աստվածացվում է Բուդդահ Շակեյ (Սաքեյ) Մունի անունով (Բսահակյանի մոտ՝ Սաքիա Մունի):

Բուդդայական կրոնին ու փիլիսոփայությանն առնչվող հարցերն ամփոփված են Սուրբ գրքի երեք հավաքածուներում՝ «Տրիպիտակի կամ երեք կողով» վերնագրով, ուր ի մի են բերված Բուդդայի մտքերը՝ ասված ամենամտերիմ աշակերտներին: Բուդդայականությունն ուրույն և անկախ կրոն է, որին դավանում է 400 միլիոնից ավելի ազգաբնակչություն, այսինքն՝ այնքան, որքան քրիստոնեության հետևորդների թվաքանակն է: Այս կրոնափիլիսոփայության հիմքում «փրկության» կամ «ազատության» գաղափարն է, համաձայն որի՝ կյանքը տառապանք է, և դրա պատճառը մարդկանց ցանկություններն ու կրքերն են: Բուդդան ոչ թե ազատում է մարդկանց, այլ սովորեցնում նրանց փրկության ճանապարհը: Այս առաքելությամբ էլ բուդդայականությունը խոր աղերսներ ունի «Ուպանիշադներին», որի իդեալը կատարելության ձգտող անհատն է: Ա. Շոպենհաուերի համոզմամբ այն եզակի ստեղծագործություն է, քանզի աշխարհում չկա այդօրինակ բարերար ազդեցությամբ և հոգեպես բարձրացնող որևէ գիտական աշխատություն, ինչպես «Ուպանիշադները»¹¹: Ուշագրավ է, որ ոմանք էլ Բուդդային համարում են ոչ թե փիլիսոփա, այլ բարոյագիտության ուսուցիչ և բարենորոգիչ: Բուդդայականության տեսության համաձայն՝ կյանքը տանջանք է և դրանից կարելի է ազատվել, եթե մարդն իր մեջ «մարի» իր «ես»-ի մարմնական և հոգևոր ցանկասիրությունները՝ հետևելով նիրվանա տանող փրկության ուղուն: «Նիրվանայի հանգիստը... երկրային ուրախությունների և տանջանքների սահմաններից դուրս է»¹²: Ցանկությունների և կրքերի հաղթահարման համար պետք է «առաջնորդվել ութստեղյան ճշմարտություններով»¹³, որոնք են՝ ճշմարիտ հայեցակետը, ձգտումը, խոսքը, վարվեցողությունը, ապրելակերպը և այլն: Այս կանոնները պատկերացում են տալիս բուդդայական բարոյագիտության ընդհանուր բնութագրի մասին, որի նախապայմանը ճշմարիտ հայացքն է, կյանքը վերափոխելու հստակ դիտավորությունը՝ ճշմարտացի խոսքը, ճշմարիտ վարքուբարքը, ասել կուզի՝ ոչ ճշմարիտ գործողություններից հրաժարումը, սեփական կյանքի ապահովումը միայն արդար վաստակով, անընդհատ ձգտումը բարոյական առաջընթացի, առողջ մտածողությունը՝ գթալ խեղճին, ձեռք մեկնել

¹⁰ Неру Дж., *Открытие Индии*, М., 1956, с. 203.

¹¹ Шопенгауэр А., *Мир как воля и представление*, СПб., 1893.

¹² Сатисчандра Чаттерджи и Дхирендрамохан Датта, *Введение в индийскую философию*, М., 1955, с. 115.

¹³ Антология мировой философии, М., 1969, с. 132.

ընչագուրկին, զբաղվել բարօրությամբ: Բարու, գեղեցիկի, մարդասիրական վեհ զգացմունքների շուրջ խորհրդածությունների կողքին¹⁴ Իսահակյանի պոեզիայում ներկա է նաև չարին չհակառակվելու բուդդայական տեսությունից սերող տրամադրությունը, ինչպես՝ «Տոկա՛, համբերի՛ր, ի՛մ վիրավոր սիրտ...»¹⁵:

Բուդդայի ուսմունքը նրա հետևորդներն անվանում են «դիարմա», այսինքն՝ օրենքի բարեպաշտություն: Ինքը՝ մարգարեն, խոստովանում է, որ «դիարման», որ ինքը հայտնի դարձրեց ու պարզաբանեց ինքնադաստիարակության ջանքերով՝ «...հին բարեպաշտության ճանապարհ է և հավերժական...»¹⁶: Նա իր ուսմունքով ցանկանում էր բարձրացնել հարգանքը և՛ մարդկային բնության, և՛ բարոյականության հանդեպ: Այս կրոնի հետևորդները ձգտում էին թափանցել մարդկային գոյության էության մեջ և բազմակողմանիորեն հիմնավորել այն սկզբունքների ճշմարտացիությունը, որոնց իրենք հետևում էին և որոնք սովորեցնում:

Իսահակյանի ստեղծագործություններում Բուդդան համընդհանուր ճշմարտության արտահայտիչն է՝ իր ամբարած կենսափորձով և իմաստությամբ: «Բուդդիան թոչուն» պատմվածքում ներկա է Իսահակյանի՝ «հայ ամենակարդացած գրողի» (Պ. Սևակ)՝ հնդկական փիլիսոփայության հարուստ, բազմաշերտ և խորքային իմացությունը: Բուդդայի հոգին մարմին է առնում թոչունի կերպարանքով և ներկայանում երկրային կյանքի շուրջ իր խորհրդածություններով. «Կյանքը տառապանք է, սակայն ապրելու կամքը ավելի տառապանք է: ... Կյանքը մի արյունոտ կոիվ է, ուր ամեն արարած պարտվում է, և հաղթող չկա...: - Անհուն է ձեր տառապանքը, ո՛վ ապրողներ, անսկիզբ և անվախճան ժամանակի մեջ եկող և գնացող...» (III, 221-223): Կյանքը տառապանք է և գոյության կոիվ, սակայն Բուդդան ինքնագոհողության է դիմում, իրեն նետում խարույկի մեջ՝ դառնալով թշվառ ու քաղցած երեխային կեր՝ վերածնվելու համար փոքրիկի կյանքով: Նա գնում է՝ հասնելու բացարձակ երանության՝ նիրվանայի: Զգայական աշխարհի հանդեպ հաղթանակ տարած Բուդդան զոհաբերում է իր կյանքը. «Եվ երբ երեխան ուտում էր խորոված միսը, թոչունի հոգին գնաց և մարմնացավ Սիթհարթայի մեջ, որը դարձավ մարդաձև Բուդդան՝ կատարյալ և իմաստուն լույսը՝ ավետելու աշխարհին չորս սրբազան ճշմարտությունները... և հասնելու համար բացարձակ երանության – նիրվանայի» (III, 224): Բուդդայի կերպարը «Բուդդիան» ստեղծագործության մեջ արդեն ներկայանում է երկվության, երկդիմության սկզբունքով՝ պայմանավորված անհատի աշխարհաճանաչողությամբ: Բուդդան գնում է մեծ ճշմարտություն որոնելու, սակայն մարդիկ

¹⁴ Բուդդայականության հետ խոր աղերսներ ունի քրիստոնեությունը, որը հատկապես առկա է հետևյալ սկզբունքների մեջ: Ք.ա. առաջին հազարամյակի առաջին կեսի ծնունդ «Մարաբհարատա» էպոսի տասնութ գրքերից մեկում ասվում է. «Վարվի՛ր ընկերոջդ հետ այնպես, ինչպես դու կուզեիր, որ քեզ հետ վարվեն: Մի՛ արա հարևանիդ այնպիսի բան, ինչը ինքդ չէիր ցանկանա, որ քեզ անեն: Նայի՛ր հարևանիդ, որպես ինքդ քեզ» (Кропоткин П. А., *Этика, М., 1991, с. 239*):

¹⁵ **Իսահակյան Ավ.**, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. I, Ե., 1973, էջ 170: Այսուհետև՝ մեջբերումները այս հրատարակությունից. հատորը (հ. 2, Ե., 1974, հ. 3, Ե., 1975) կնշվի հոռմեական, էջերը՝ արաբական թվերով:

¹⁶ **Ильин Г. Ф.**, *Религии древней Индии, М., 1959, с. 26.*

ծաղրում, ծանակում են նրան: Իր հոգում տիեզերական սեր ու գուր ամբարած Բուդդան զայրությո՞ւմ է լցվում աշխարհի ու մարդկանց դեմ՝ նրանց կործանումն աղերսելով աստվածներից: Ափի մեջ բույն դրած թռչունի ձագերին նայելով, սակայն, լուսավորվում է նրա միտքը. մի թե աշխարհն էլ այդպիսի մի բույն չէ, իսկ մարդիկ՝ անօգնական արարածներ: Այս խոհերի ուղեծրով էլ նա հասնում է «մեծ ճշմարտության»՝ ինքնաճանաչման, ինքնակատարելագործման:

Ուշագրավ է նաև Իսահակյանի ստեղծագործությունների գուգահեռը հնդկական պատմամշակութային կոթողներին: Ք. ա. III հազարամյակում սանսկրիտով շարադրված «Արհասատրա կամ գիտություն քաղաքականության մասին»¹⁷ գիրքը խիստ արժեքավոր տեղեկություններ է պարունակում հին Հնդկաստանի պատմության, մշակույթի, պետական ու հասարակական կառուցվածքի մասին: Գրքի ենթադրվող հեղինակը Կաուտիլյան է: «Արիական ցեղի այդ մեծագույն փաստաթուղթը» 1909 թ. լույս է տեսել անգլերեն և ունեցել է 5 հրատարակություն: Գիրքը 1926 թ. գերմաներեն է թարգմանել Ի. Մեյերը: Թարգմանությունը կատարված է մեծ բարեխղճությամբ՝ երեք լեզուներով հրատարակված տեքստերի հիման վրա: Այն աչքի է ընկնում հարուստ մատենագիտական տեղեկատվությամբ ու ծանոթագրություններով: Այս ուրույն գրական հուշարձանը ժամանակին զբաղեցրել է հնդիկ և եվրոպացի բազմաթիվ մասնագետների ուշադրությունը՝ կյանքի կոչելով հարուստ գրականություն: «Արհասատրան» բացվում է «օ՛մ» հասկացությամբ, որը համարվում է բարձրագույն սրբության արտահայտություն և օգտագործվում կրոնական արարողությունների, երկնքի աստվածներին ուղղված աղոթքի առաջամասում և միշտ դրվում գրքի սկզբում: Համաձայն հնդկական հնչյունաբանության՝ «օ՛մ»-ը միաստիկ բառ է՝ բաղկացած երեք հնչյուններից՝ ա, ի, տ, և Տրիմուրտի աստծո խորհրդանիշն է: Տրիմուրտիի¹⁸ կերպարում միավորված են (*Tri-murti*) երեք կերպար, դեմք, մարմին հնդկական եռաստվածությունը՝ Բրահմա, Շիվա, Վիշնու: Եռամիասնական աստվածները գոյություն ունեն մեկ աստծո մեջ, և երեք մասի բաժանված էլ նրանք մնում են միասնական:

Հարկ է նշել, որ «Բուդդիան» ստեղծագործության «օ՛մ»-ի մեկնությունը 1975 թ. 3-րդ հատորի տողատակում ամբողջական չէ. այն առավել հարուստ ու բազմաշերտ բացատրություն է ենթադրում:

«Բուդդիան» ստեղծագործության մեջ դեպքերը ծավալվում են կենսագրական հենքով. արքայազն Սաքիա Մունին Բուդդա դարձավ և իջավ Հիմալայներից՝ մարդկանց քարոզելու չորս մեծ ճշմարտությունները: Կյանքը տառապանք է, և տվայտանքի հաղթահարման միակ միջոցը սրտահաճության հաղթահարումն է, զգայությունների պատճառով առաջ եկած մոլորությունների մերժումը: Համաձայն

¹⁷ *Das Altindische Buch vom Welt-und staatsleben, Das Arthacast des Kautilya Aus dem sanskrit ubersetzt und mit Einleitung und Anmerkungen versehen von Johann Jakob Meyer, Leipzig, 1926. Մեջբերումները կատարված են Архасатра или Наука о политике (М.-Л., 1959) հրատարակությունից (այսուհետև՝ Ա, էջերը կնշվեն կից):*

¹⁸ Брокгауз Ф. А., (Лейпциг), И. А. Эфрон (СПб.), Энциклопедический словарь, т. XXXIII, СПб., 1901, с. 830.

բուդդայական կրոնի՝ զգացմունքների սանձահարումն ընտրած նպատակին հասնելու, սկսած գործը ավարտին հասցնելու անհրաժեշտ և պարտադիր պայմանն է: Զգայականի հանդեպ հաղթանակը մարդուն ֆիզիկական և բարոյական առումներով ընտելացնում է կարգապահության՝ հնարավորություն տալով կենտրոնանալու իրեն զբաղեցնող խնդրի վրա: Եթե մարդը չի կարողանում իր զգայական աշխարհը կառավարել, ապա նա նպատակին հասնել չի կարող: Այս մտայնությունն է առկա նաև սանսկրիտ լեզվով շարադրված հին գրական հուշարձաններում (Մահաբհարատա¹⁹, Ռամայանա): Տասը շղթաներից ազատված մարդը, որ հաղթանակ է տարել իր հուզական աշխարհի նկատմամբ և դարձել խոհամիտ ու բանական արարած, արդեն արքա է²⁰, արարիչ մտքի, գաղափարի, իմացության: Ահա և արքայազն Սաքիա Մունին դառնում է Բուդդա. «նրա հոգում հայտնագործվեցին մարդկության մինչ այդ օրը անհայտ՝ տանջանքի ու փրկության մեծ ճշմարտություններ, այն ժամանակ նա իջավ *Հիմալայի* մայրիկներով ներհուն արտևանքներից մինչև *Բենարես... դեղին քղամիդով փաթաթված*՝ տիեզերական իմաստությամբ անդորր աչքերով ողջունում էր ճանապարհի անցնող-դարձողներին՝ ավետարանելով ամենքին. «Ես գնում եմ ճշմարտության թագավորությունը հիմնելու...» (III, 138): Ընդգծված բառերն ու բառակապակցությունները մարգարեի կենսագրական մանրամասներն են՝ առաջին քարոզչությունը կատարել է Բենարես քաղաքում, դեղին քղամիդով էր, իսկ ամբոխը հռչակում էր նրա վրա, այլ դեպքում արդեն սիրելի աշակերտը Անանդան էր («Անանդան և մահը»): Բենարեսն այն քաղաքն է, ուր, ըստ Հ. Թումանյանի «Ոսկի քաղաքը (հնդկական հեքիաթ)»-ի, թագավորում է բարու իշխանությունը, որտեղ «ժուկով-ժամանակով ... տիրելիս է լինում Ուքանա թագավորը»: Եվս մի հետաքրքիր գուգահեռ. Թումանյանը, որ հեքիաթը «հարուստ ու շքեղ աշխարհ» էր համարում, այն ևս գրել է 1909 թ.: Այն հանգամանքը, որ հայոց գրական մեծերին զբաղեցրել են Հայաստանի քաղաքական, տնտեսական կյանքին առնչվող իրադարձությունները, վկայում, հաստատում է Իսահակյանի 1913 թ. Կ. Պոլսում գրած պատմվածքը՝ նույն վերնագրով՝ «Ոսկի քաղաքը»: Իսահակյանի պատմվածքի հիմքում հին Արևելքի դիցաբանությունից վերցված գրույցն է՝ «Հնդու աշխարհում նվիրական Հիմալայի լեռնաշղթայի բավիղի մի ծոցում» ապրող չար ու դաժան մի թագավորի մասին: Թվում է՝ հին արիական մի երկրում, որ երկու գրողներն էլ պատկերացրել են Հնդկաստանը, հայոց մեծերը ուտոպիստական երկրի որպիսությունն էին ուսումնասիրում, երկիր, ուր թագավորում է սերը, ճշմարտությունը, ազնվությունն ու բարությունը:

Չարության պատճառով աստվածները գրկել էին այդ երկրի թագավորին որդի ունենալու շնորհից և արդեն ծերության շեմին, հուսահատ, քանի որ իր մահով գահը թափուր կմնար, և արքայական իր տոհմը կվերանար, նա հրամայում է, որ

¹⁹ Մահաբհարատան (Բհարատի մեծագույն պատերազմը) հնդիկների նշանավոր էպիկական պոեմն է, պարունակում է 18 գիրք և 220.000 բանաստեղծություն:

²⁰ Ի տարբերություն քրիստոնեության և մահմեդականության բուդդայական կրոնում Արարիչ Աստծո և փրկչի գաղափար գոյություն չունի: Արարչին՝ որպես բարձրագույն էության, կարող է հավասարվել նիրվանա հասած յուրաքանչյուր մահկանացու բուդդա:

«ամենուրեք զոհեր մատուցեն աստվածներին, և ինքը գնաց Մեծ Բրահմայի տաճարը, գետնատարած ընկավ աստծո ոտքերի առջև, աղերսելով, որ էթե աստվածների հայրը զթա և մի զավակ բաշխի իրեն, խոստանում է զավակն ընծայել աստծուն, որ ապագա գահակալն ընթանա միայն աստծուն ընդունելի՝ ճանապարհով» (III, 168): Աստծո ողորմածությունից անսահման ուրախացած՝ թագավորը որդուն հանձնում է իմաստուններին, որպեսզի նրան կրթեն այնպես, ինչպես աստծուն հաճելի է, որ նա հասակ առնելով՝ աստծո կամքի համաձայն կառավարի պետությունը: Բասիակյանի այս պատմվածքի բարոյախոսական սևեռումները խոր հարազատություն ունեն «Արհասատրային», և նա անպայման ծանոթ է եղել հին հնդկական այս բնագրին, քանի որ «Ոսկի քաղաքի» սյուժեն ծավալվում է նույնօրինակ խորհրդածությունների հենքով: Այս առումով ուշագրավ են նաև այդ հին գրքի վերնագիր-ենթավերնագրերը՝ «Իմաստուն արքայի վարքաբանությունը», «Արքայի պարտականությունները», «Հսկողություն արքայական ժառանգների վրա», «Գիտություն պետական ղեկավարման մասին» և այլն: Գրքի վեցերորդ մասը նվիրված է պետական հիմքերի կառուցման ու կատարելագործման մեթոդներին, խաղաղության և աշխատանքի մասին օրենքներին. «Թող նա՝ արքան, հասնի հաղթանակի... իմաստունների հետ շփվելով՝ հասնի իմաստության, կայուն, անդրդվելի ինքնատիրապետման՝ մատնացույց անելով այն, ինչ պետք է կատարել՝ սահմանված համապատասխան օրենքները կիրառելով, ճշմարիտ վարքուբարքով, գիտություն սիրելով, մարդու հանդեպ տածած սիրով, որը բազմապատկում է ունեցվածքը և միացնում բարուն՝ բարօրությանը: Թող նա տրվի միմյանց շաղկապված երեք նպատակի: Այդ երեքից առաջինն օրենքն է, ապա օգուտը և սերը, որն անչափ հարգված և մեծարված է...» (Ա, 22):

Ուշագրավ է, որ սիրո գաղափարն իր ողջ խորքով ծավալվում, ներկայանում է նաև տարբեր ժամանակների մտածողների՝ Կանտի, Ֆրոմի ուսմունքներում:

Բասիակյանի ստեղծագործության մեջ արքայից պահանջվում է, որ նա հպատակներից որևէ մեկին թույլ չտա խախտելու իր հիմնած օրենքները և առանձնահատուկ ուշադրության արժանացնի որդու՝ թագաժառանգի դաստիարակությանը: Հնագույն տեքստում գրքի հեղինակն այնուհետև արքային խորհուրդ է տալիս թույլատրելի սահմանը չանցնելու համար դասատուներ, կրթված նախարարներ ունենալ իր կողքին, որպեսզի նրան միշտ հետ պահեն վտանգավոր իրավիճակներից: Այս ամենով էլ, թվում է, որ «Ոսկի քաղաքը» ստեղծագործության մեջ Բասիակյանին զբաղեցրել է հնդկական կառավարման համակարգը՝ իր երկրի քաղաքական-տնտեսական կացության շուրջ խորհրդածություններով. «Իմ պետության մեջ չպետք է լինի զենքը ձեռքին գինվոր և զորապետ. ամեն մեկը պիտի պաշտպանե հայրենիքը, երբ օրը գա. զենքերդ վար դրեք և գնացեք հողը հերկեցեք, արհեստներն ու գիտությունները ճոխացրեք...» (III, 169): «Իմ պետության մեջ չպետք է լինի վաճառական և կրպակ, այսուհետև դրամ չպետք է կտրվի... Չպետք է լինի վաշխառու և շահ: Այսուհետև չպետք է լինի կրոնավորների դաս. չպետք է լինի աստծո և մարդկանց մեջ միջնորդ: Գնացե՛ք հողը հերկեցեք, արհեստներն ու գիտությունները ճոխացրեք... Եվ ճոխացավ երիտասարդ թագավորի պետությունը ...լեռ ու ձոր փթթած այգիներ դարձան, կարիքն ու չարիքը

վերացան այդ երկրից, և երջանկությունը ծաղկեց ամեն հարկի տակ, ամեն սրտի մեջ, որովհետև թագավորը կառավարում էր երկիրը աստծու ճանապարհով» (III, 170):

«Ոսկի քաղաքը» ավարտվում է հեղինակի թախծոտ խորհրդածություններով. ուտոպիստական, երագած աշխարհին անէացել է. մարդիկ կորցրել են «Ոսկի քաղաքի» ուղին, իսկ այդ ճանապարհը կորստի է մատնվել, որովհետև նրանք մոռացել են այն չորս սրբազան ճշմարտությունները, որ քարոզում էր Բուդդան: Իսահակյան-մարդուն այստեղ հուզող հարցն իմաստուն, ազնիվ, արդարամիտ և արդարադատ, իր հպատակների հանդեպ սիրով, գթասրտությամբ համակված, նրանց բարօրության համար մտահոգված երկրի ղեկավար ունենալու երագանքն էր:

Հնդկական կրոնում Բուդդան, որ ճշմարտության, իմաստության մարմնավորողն է, հրապարակում խոնված ամբոխին քարոզում էր «չորս մեծ ճշմարտությունները», իսկ ամբոխը հռչակում²¹ էր նրա վրա «արքայորդին ցնդել է...» (III, 139):

«Արհասատրայում» ներկայացված են նաև սոցիալական տարբեր շերտերի մարդիկ. «Մարդիկ... չորս խմբի, շերտի և կյանքի չորս աստիճանների են բաժանվում» (Ս, 528): Հռչակագրող ամբոխն այդ վերջին՝ չորրորդ շերտն է, որի վարքն Իսահակյան մտածողին չի հետաքրքրում. նրան զբաղեցնում է իմաստունի վարքագիծը: Բուդդան, վերցնելով իր ցուպը, նորից է իջնում՝ մարդկանց մեջ ճշմարտություն բարբառել-պատգամելու և փրկության «օրենքի անիվը» գլորելու աշխարհի մեջ: Նրա հետևորդների հավաստմամբ «Շարժի դրեց օրենքի անիվը». շարժի դնելը նշանակում է բարեպաշտության օրենքի²² քարոզ, քանի որ «Ճշմարտության չիմացությունն է պատճառը բոլոր դժբախտությունների» (Ս, 528): Ուշագրավ է, որ հին հնդկական բնագրում ևս հիշատակվում է անիվը, որն իր մեծ պտույտով միախառնվում է փոքր ամրակներին. անիվը ներկայանում է «հանդիսությունների և ... ուսուցման համար» (Ս, 148): Պատահական չէ, որ բուդդայական կրոնի խորհրդանիշը ճարտարապետության մեջ «չակրան» է՝ կյանքի օրենքի անիվը, որն ավանդորեն քննություն բռնած և ժամանակի ու տարածության մեջ սկիզբը և վերջը միավորած մի ամբողջություն է:

Բուդդայական փիլիսոփայությունը մարդու կյանքում ընդունում էր երեք հիմնական արժեք, կյանքի նպատակ, որոնց հետագայում ավելանում է ևս մեկը: Առաջինն օրենքն է, այսինքն՝ կրոնին, գիտությանը և հասարակության բարօրությանը ծառայելը, երկրորդը՝ օգուտը՝ հարըստության, նյութական արժեքների կուտակումը, երրորդը սերն է՝ զգայական հաճույքների որոնումը, իսկ չորրորդը՝ փրկությունը՝ հոգու, անհատի վերջնական փրկությունը: Այս շարժիչ ուժերը կամ արժեքները միշտ շաղկապված են և գտնվում են հավասարակշռության մեջ, սակայն բոլոր դեպքերում միշտ մեկը գերիշխում է: «Մահաբհարատայի» համաձայն՝ գլխավորը օրենքն է, իսկ ըստ «Արհասատրայի»՝ օգուտը: Իսա-

²¹ Նմանօրինակ խոհերի արդյունք է Ե. Թադևոսյանի «Հանճարը և ամբոխը» կտավը:

²² Հնդկերենում «մանու» բառը նշանակում է և՛ մարդ, և՛ օրենք: Մանուն մարդկային ցեղի նախահայրն է:

հակյանի՝ հնդկական մոտիվներով ստեղծագործություններում այս երեքը՝ օրենքը, օգուտը և սերը, միշտ ներկայանում են միասնության և փոխներդաշնակության մեջ: «Բուդդիա թոչուն»-ում գերակա դիրքում սերն է՝ որպես ինքնագոհություն, «Անանդան և մահը» գրույցում՝ մահը հաղթահարելու, ոգու գործությամբ փրկություն ապահովելու գաղափարը. «-Ես քեզնից չեմ վախենում, ո՛վ մահ,- անհողդողդ ասաց Անանդան:- Ես հզոր եմ քեզնից, անեզրական է հավերժական իմ եսը, ժամանակը և տարածությունը, որի մեջ ես դու ոճրագործում և որը դու անգոր ես հաղթահարել» (III, 156):

Բսահակյանի համոզմամբ՝ բուդդայականությունը հասարակական կեցության կազմակերպման այնպիսի ձև է, որը հնարավորություն է ընձեռում մարդուն, ազգին, հասարակությանը ոչ միայն հաստատելու իր «ես»-ը, այլև ուղիներ է նախանշում «ես»-ի արդիականացման ու նպատակամետ կերպափոխման համար: Եվ պատահական չէ, որ անդրադառնալով բուդդայական կրոնի առանձնահատկություններին՝ ճանաչված մտածող Ա. Բարտը գրում է. «Աշխարհում գոյություն ունեցող կրոններից... ոչ մեկն այդքան կենսունակ և այդքան զիջող, այդքան հարմարվող և այդքան հնարամիտ չէ՝ ծայրահեղությունները հաղթահարելու և տարբեր կերպարանք ստանալով՝ միշտ վերածնվելու, իր կորուստները փոխհատուցելու առումով, ինչպես բուդդայականությունը»²³: Հայաստանի և հայ ժողովրդի ճակատագրի խորհրդածություններում էլ, թվում է, Բսահակյանին գրավում էր բուդդայական ուսմունքի հենց այս հնարամտությունը՝ կորուստները փոխհատուցելու, ծայրահեղությունները հաղթահարելու առաքելությամբ:

ЗАПАДНОЕ “ЭГО” И ВОСТОЧНЫЙ ЧЕЛОВЕК В ПРОИЗВЕДЕНИЯХ А. ИСААКЯНА

ЗАКАРЯН М. Г.

Резюме

Глобализация, не являясь новым явлением в мире, направлена на выравнивание культур. Малые народы, находясь на стыке Запада с Востоком, противостоят этому по-своему.

Писатели, обращаясь к традициям устного народного творчества, а также к западной и восточной философии, способствуют развитию диалога между народами. А. Исаакян в своих произведениях использовал как западные, так и восточные религиозно-философские традиции, которые нашли отражение в его творчестве.

²³ Бартъ А., *Религии Индии*, М., 1987, с. 2.